Պատանի հնագետ դպրոցը սկսում է **2015**թ. ուսումնական գործաշրջանը

«էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի «Պատանի հնագետ» դպրոցը հրավիրում է միջին և բարձր դասարանների դպրոցականներին, ուսանողներին՝ մասնակցելու դպրոցի 2015թ. գարնանային դասընթացին, որը կմեկնարկի 2015թ. ապրիլի 17-ից: Դասընթացը բաղկացած է տեսական և գործնական պարապմունքներից: Տեսական պարապմունքների տևողությունը 2 շաբաթ է՝ շաբաթական 3 դաս պարբերականությամբ: Գործնական պեղումները՝ 2 շաբաթ տևողությամբ, կընթանան թանգարանի տարածքում գտնվող ուսումնական պեղավայրում:

Դասընթացը նպատակ ունի աջակցել հնագիտությամբ հետաքրքրվող երիտասարդներին մասնագիտության ընտրության հարցում, ինչպես նաև հնագիտական գիտելիքների տարածմամբ նպաստել հնագիտական ժառանգության պահպանությանը:

Դիմումներն ընդունվում են մինչև 2015թ. ապրիլի 16-ը՝ նշելով դիմողի անուն-ազգանունը, ուսումնական հաստատության անվանումը /դպրոց, կրթական համալիր, վարժարան և այլն/, մշտական բնակության վայրը և հասցեն, հեռախոսի համարը: Դիմումի ձևաչափը տրամադրվում է արգելոց-թանգարանում, Հասարակայնության հետ կապերի և հանրահռչակման բաժնում:

Դիմումը կարող եք ներկայացնել անձամբ /0020, ք. Երևան, էրեբունի փող. 38/ կամ miq.badalyan@gmail.com էլ. փոստով:

Մանրամասների համար կարող եք զանգահարել Հասարակայնության հետ կապերի և հանրահռչակման բաժին՝ 43-89-53 հեռախոսահամարով կամ Միքայել Բադալյանին՝ 093-20-05-51 հեռախոսահամարով:

1 / 1